# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## 1. Ներածություն

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Մոլդովական 18/6 հասցեի հարակից ավտոճանապարհի բետոնացման աշխատանքային նախագիծը կազմվում է Դիլիջանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի հիման վրա : Նախագիծը կազմված է Դիլիջանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և թերությունների ակտի հիման վրա : Համաձայն վերը նշված առաջադրանքների վերանորոգվում է փողոցը ՝ 210.0 գմ երկարությամբ :

Ճանապարհի հատակագիծը, երկայնական և լայնական կտրվածքները փոփոխության չեն ենթարկվում :

Նախատեսված է բետոնե ծածկի կառուցում B - 25 տիպի բետոնից - 1326.0 մ$^2$: Բետոնե ճանապարհի 7 մ քայլով անհրաժեշտ է 10 մմ հաստությամբ արանք բացել, որտեղ պետք է լցվի բիտումային մածիկ: Կարանի բացվածքը անհրաժեշտ է հետագայում ջերմային դեֆորմացիան խթանելու համար: Բիտումը պետք է արվի բետոնի մակարդակից 2 մմ բարձր: Բիտումը անհրաժեշտ է որպեսզի կանխի ջրի ներթափանցումը: Ճանապարհը հարթեցվում է մեխանիզմով: Բետոնային աշխատանքից առաջ ճանապարհը տոփանվում է խճով: Ճանապարհի սկզբնամասում և վերջնամասում նախատեսված է ե/բ հեծան h = 40 սմ բարձրությամբ, ճանապարհի ամբողջ լայնությամբ, որն արվում է ճանապարհի սկզբնամասում և վերջնամասում ջրի ներթափանցումը կանխելու և ծածկույթը պահպանելու համար:

## 2. Շրջակա միջավայրի պահպանում

Շինարարության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի վրա: Աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտ է խնամ- քով վերաբերվել մոտակա ծառերին և թփերին, պահպանելով նրանց վնասումից և ոչնչացումից: Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը շինարարական աղբից, բեռնումով և տեղափոխումով լցակույտ:

Շին. կազմակերպության աշխատողները և ղեկավարները պետք է միշտ հիշեն շրջակա միջավայրի պահպանման մասին : Շինարարության ժամանակ պետք է պահպանել հետևյալ նորմատիվային փաս-տաթղթերը. ՇՆ և Կ III - 4.80 «Աշխատանքի անվտանգությունը շինարարությունում» ՇՆ և Կ III - 1.75 «Շինարարական արտադրության կազմակերպում»:

<table>
<tr><td>ՏՆՕՐԵՆ</td><td>ԽԱՉԱՏՐՅԱՆ</td><td></td><td colspan="3" rowspan="2">ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Մոլդովական 18/6 հասցեի հարակից ավտոճանապարհի բետոնացում</td><td rowspan="2"></td></tr>
<tr><td>ՆԳԻ</td><td>ԽԱՉԱՏՐՅԱՆ</td><td></td></tr>
<tr><td>ԳԾԵՑ</td><td>ՄԱԿՈՒՆՑ Դ.</td><td></td><td rowspan="2">Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ</td><td>ՓՈՒԼ</td><td>ԹԵՐԹ</td><td>ԹԵՐԹԵՐ</td></tr>
<tr><td>ՍՏՈՒԳԵՑ</td><td>ԽԱՉԱՏՐՅԱՆ</td><td></td><td>Ա Ն</td><td>ՃՇ - 2</td><td>8</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td rowspan="2">Բացատրագիր</td><td colspan="3" rowspan="2">«ԳՈԼԴ - ՆԵԹ» ՍՊԸ</td></tr>
<tr><td></td><td></td><td></td></tr>
</table>